



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ Ա Ր Ա Ն
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

< 10 > հունիսի 2013 թ.
ք.Գավառ

N 344

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով „Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի „Դ,, կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի „Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին,, N17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝64-2.3-47) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 4-ի թիվ 5 որոշումը, եզրակացությունը և Սուրեն Պետրոսյանի դիմումը՝

հրամայում եմ.

1. Սուրեն Պետրոսյանին 2013 թվականի հունիսի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 64-2.3-47) պաշտոնում:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը և անձնակազմի կառավարման բաժնին՝ սահմանված կարգով հաշվարկել աշխատավարձի չափը և ներկայացնել վճարման:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2013թ. հունիսի 10-ից:

 Ս. ԽԼՂԱԹՅԱՆ